Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ծիածանի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Ծիածանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1.ՀՀ Արմավիրի մարզի Ծիածանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / ծածկագիր 3.2-2/;

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աշխատակազմի առաջին կարգի մասնագետը աջակցում է հողերի չափագրման, ինքնակամ հողազավթման, կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, մասնակցում է հողային հաշվեկշռի, հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին; Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ;

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, << Հողային օրենսգրքի >>, << Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացության, ինչպես նաև տրամաբանելու, իրավիճակ-ներում կողմնորոշվելու ունակություն;

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018 թվա-կանի օգոստոսի 27-ին ժամը 12:00, Ծիածանի համայնքապետարանի շենքում;

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արմավիրի մարզի Ծիածանի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայաց-նելիս/

-Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի,վկայականի, աշխատանքային գրքույկի պատճեները բնօրինակի հետ միասին;

- Արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը իսկականի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք;

-Մեկ լուսանկար 3;4 չափի

- Անձնագրի պատճենը

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթղթերը;

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2018 թվականի օգոստոսի 10-ը;

Մրցույթին մասնակցելու ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզ Ծիածան համայնքապետարան 1 փողոց թիվ 48 հասցեով, հեռ./098/ 00 77 37/ և Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. /0237/ 2-07-70, 2-76-49